ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՊՈՂԻ

ԿՆՈՊԻՏԱԿԱՆ ՈՐՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՈՒՄ 2011-2012թթ.

«ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 2011-2012թթ.

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2015

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 720

Տպագրվում է ԼՂՀ միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի որոշմամբ

Հ 720 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 2011-2012թթ./ «ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2015.- 192 էջ:

Գրքում ընդգրկված են Մեծ Հայքի տասներորդ նահանգ Արցախում 2011-2012թթ. ընթացքում կատարված հնագիտական պեղումների վերաբերյալ հոդվածները: Տարաժամանակյա հուշարձանների մասին գիտական հոդվածներն առավել ամբողջական և ամփոփ տեղեկություններ են հաղորդում Արցախ աշխարհի նյութական և հոգևոր մշակույթի, տնտեսության, կյանքի ու կենցաղի տարբեր կողմերի մասին: Ժողովածուն նախատեսված է հնագետների, պատմաբանների, մշակութաբանների, ճարտարապետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-9939-1-0287-0

© «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ, 2015

Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանեսովա Տ., Հովսեփյան Ռ.

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ 2012 Թ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ներածություն

Պեղումներն իրականացվել են հիմնական երեք տեղամասերում՝ Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատ, Անտիկ առաջին թաղամաս, Կենտրոնական թաղամասի վաղ քրիստոնեական տաճարի հյուսիսային բակ: Հետախուզական պեղումները կատարվել են քաղաքի և շրջակայքի այլ տարածքներում (նկ. 1): Տիգրանակերտի ուսումնասիրման ամբողջ գործընթացը ֆինանսավորել է ԼՂՀ կառավարությունը (ղեկ.՝ Համլետ Պետրոսյան (ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), հնագետներ Ինեսա Կարապետյան (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու), Վարդգես Սաֆարյան (Արցախի պետ. համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու), Տատյանա Վարդանեսովա (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու), ճարտարապետ Լյուբա Կիրակոսյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հնագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու), հնաբուսաբան Ռոման Հովսեփյան (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, կենսաբ. գիտ. թեկնածու), Լաուրա Սուքիասյան, Ռայա Սարգսյան, Լուսինե Հարությունյան, Շանթ Գրիգորյան, Էլեն Գրիգորյան, Գևորգ Ղուկասյան (ԵՊՀ ուսանողներ), Խաչենագետի ներքնահովտի գյուղերի շուրջ 45 բանվոր): 2012թ. պեղումներն սկսվել են հունիս 22-ին և ավարտվել օգոստոսի 20-ին՝ ընդգրկելով արշավախմբային 60 և պեղման 50 օրեր:

1ա. Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատի պեղումները (նկ.2)

Հիմնական աշխատանքները կենտրոնացվեցին հյուսիսային պարսպի արտաքին մասում: 2012թ. հնագիտական պեղումների արդյունքում բացվեց պարսպապատի 20մ երկարությամբ և 2,6 մ լայնությամբ հատվածը (նկ. 3), ընդ որում՝ ոչ միայն ժայռի մեջ փորված քարերի հիմքերը, այլև պարսպի լավ պահպանված պատերը: Պարսպապատը չոր շարվածքով է, բլոկները մեծաչափ են: Պատերը շարված են սրբատաշ մշակված եզրահատքով և կոպտատաշ ճակատային մակերես ունեցող քարերից: Միացումներն իրականացվել են «ծիծեռնակապոչ» կապերով: Aa42 քառակուսում հայտնաբերվեց աղյուսաշեն միջանկյալ պատ, որը կառուցված է կրաքարի ամուր հիմքի վրա և ունի պահպանված աղյուսների 5-6 շարք:

Աշխատանքներն սկսվեցին Ab41, Aa41, Aa42 քառակուսիների՝ զրոյական կետից 37,30մ խորությունում: Ab41 քառակուսում՝ բոլորակ պարսպին հպված, բացվեց հարավ-հյուսիս ուղղությամբ մի պատ՝ շարված միջին չափի, մշակված քարերից: Պատը (պահպանվել է 8 շարք) ժայռի վրա է: Հիմ-

քի մակարդակում կար արևմուտքից-արևելք ձգվող կավածեփ հարթակ՝ 0,5 սմ հաստությամբ: Հավանաբար պատն ու հարթակը ինչ-որ կառույցի մաս են կազմել: Եթե այդ քառակուսում հողը շատ փափուկ էր, ապա Ա՛ա՛40-41 քառակուսիներում լիցքը փոքր ու միջին չափի քարերի ու խճաքարի խառնուրդից էր: Ա՛ա՛41 քառակուսու հողը բաղկացած է պարսպից թափված միջին չափսի քարերի և հում աղյուսի մնացորդներից: Գտածոների հիմնական մասը անտիկ խեցեբեկորներ են:

Aa41 քառակուսում 2,40մ խորությամբ բացվել է երկրորդ կլոր աշտարակի արևելյան հատվածի երեք եզրաքար (նկ. 4): Նշված խորությունում գտածոների հիմնական մասը նույնպես անտիկ խեցեբեկորներ են, միջնադարյան բեկորները հազվադեպ են: 2011թ. պեղումների միջոցին միջնադարյան ու անտիկ խեցեբեկորներ համարյա հավասարաչափ էին գտնվում: Հավանաբար պարսպապատի այս հատվածը միջնադարում կա՛մ ընդհանրապես չի օգտագործվել, կա՛մ շատ քիչ է օգտագործվել:

Աշտարակի արևելյան հատվածում, մակերեսից 3,34 մ (զրոյականից 37,95մ) խորությունում բացվեց պարսպապատի երկու քար՝ «ծիծեռնակապոչ» կապերով:

Ա՛ա՛40 քառակուսում 3,40մ խորությունում գտնվեց մետաղյա իրի կտոր:

Ա՛ա՛41 քառակուսում հայտնաբերվեց մեծ չափերի աղյուսաձև բեկոր՝ 6սմ հաստությամբ. պահպանված մասի չափերն են 18 և 13 սմ:

Ա՛ա՛40, 41, 42 քառակուսիներում բացվել է կլոր աշտարակի ևս 4 քար: Այս հատվածում լավ երևում էր, որ կվադրերի և ժայռի միջև եղած դատարկ մասերը լցվել են փոքր քարերի հետ խառնված կրախճով: Գտնվածները հիմնականում անտիկ խեցեբեկորներ, վանակատե երկու ցլեպ, երկաթյա անորոշ երկու իրի կտոր են՝ քայքայված վիճակում:

Պարսպապատի շարունակությունը 4 քար է, որից հետո բացվեցին ժայռափոր հիմքեր, որոնց երկու եզրերի արանքում պահպանվել են խիճ ու հող:

Ab40 քառակուսում՝ կլոր աշտարակի հարավարևմտյան հատվածում, բացվեց 4,45 մ երկարությամբ, 0,85 մ հաստությամբ ու 1,90-0,90 մ լայնությամբ հողազանգված: Վերևի 0,45մ հաստությամբ շերտը խիճ է, որից հետո կավահող՝ խառնված միջին չափի քարերի հետ: Այստեղ գտնվեցին անտիկ միականթ սափորիկի, մեծ թաս-գավաթի, ինչպես նաև միջնադարյան խոհանոցային անոթների խեցեբեկորներ, վանակատե դանակի շեղբի փոքր կտոր: Ա՛ա՛42 քառակուսում պարսպապատի շարունակության (հարավային մաս) երկու քարից հետո բացվեցին ժայռափոր հիմքեր: Պարզ երևում էր, որ թեքության վրայի փորվածքները՝ մինչև կվադրը տեղադրելը, մակարդակի էին բերվում կրաշաղախի միջոցով:

Aa42 քառակուսում էր աղյուսաշար պատը (պահպանվել է 7-8 շարք, նկ. 5): Աղյուսների չափերն են 32x32x11 սմ: Կլոր աշտարակից մինչև աղյուսաշար պատը 4,40 մ է: Պահպանված աղյուսների հատվածը փոքր քարերից կառուցված պատ-հարթակի վրա էր, որն, իր հերթին, խճակրային հարթակի վրա էր: Քարաշարի հիմքերը մաքրելիս պարզվեց, որ դրանք քարախճի վրա են:

Պարսպապատի նորաբաց հատվածում նկատելի էր կառուցապատման հետևյալ սկզբունքը. պարսպապատի հարավային ու հյուսիսային եզրերին 0,45–0,55 սմ լայնությամբ խճաքար էր լցված, որը ծածկել էր ժայռի ու պատի միջև եղած ճեղքը: Նույն պատկերն էր նաև կլոր աշտարակի արևելյան հատվածում: Հավանաբար, դա արվել է դեպի պարսպի հիմքը անձրևաջերի մուտքը կանխելու նպատակով:

Ab40 քառակուսու մաքրման շնորհիվ պարզվեց, որ աշտարակի հարավարևմտյան եզրից դեպի հարավ ձգվում է 3 խոշոր քարերից կազմված պատ (լայնությունը՝ 2,50 մ, բացված մասի երկարությունը՝ 1մ), որը միջնաբերդի հենապատի հետ նույն ուղղության վրա էր: Այս հատվածում հենապատին կից «պանդուսի» առկայությունից կարելի է ենթադրել, որ այստեղ տեղադրված է եղել միջնաբերդի գլխավոր մուտքը:

Աշտարակից 1,20 մ հեռավորության վրա բացված պարսպապատի միջուկը, որտեղ կվադրերը չեն պահպանվել, բաղկացած էր քարախճի հետ խառնված հողից: Նույն պատի հարավային հատվածում, աշտարակի եզրից 0,80 մ հեռու, առաջին քարից սկսած ժայռի մեջ լայն ակոս էր, որն իջնում ու թեքվում էր դեպի հարավ-արևելք և մտնում աղյուսաշար պատի տակ: Սակայն, թվում է, այդ փորվածքը ոչ մի կապ չունի աղյուսաշար պատի հետ, այն, թերևս, ավելի վաղ պատի հիմք է:

Կլոր աշտարակի հարավարևմտյան կողմից (Ab40) դեպի հենապատը տանող պատի քարերը քարախճի հարթակի վրա են: Բացված երեք քարերից արևելյանի ուղղվածությունը համապատասխանում էր հենապատի կոնտրֆորսի («պանդուսի») ուղղությանը, իսկ արևմտյանը՝ բուն հենապատի: Վերոնշյալ հարթակն, իր հերթին, ժայռի վրա էր:

Պարսպապատի հարավային մասի հողազանգվածը հեռացվեց՝ թողնելով միայն այն մասը, որտեղ պահպանվել են աղյուսաշարի մնացորդները: Այս զանգվածի բաղադրությունը հետևյալն է՝ ճմահող, փափուկ, մաքուր կավահող՝ խառնված մեծ ու փոքր քարերի հետ (1,8 մ հաստությամբ), խճաքարային զանգված (0,9-1,0 մ հաստությամբ): Նշենք, որ կվադրերի կապերից մեկում պահպանվել է ամուր քարե խիճ, ինչը, ևս մի անգամ, վկայում է, որ Արցախի Տիգրանակերտում որպես կապող միջոց օգտագործվել է նաև խճաքարե շաղախը (նկ. 6):

Aʹaʹ41 քառակուսու կենտրոնում, մակերեսից 4,90 մ խորությամբ, պարսպապատից 2,75 մ, կլոր աշտարակից 4,35 մ արևելք արձանագրվել են անտիկ կարասի մնացորդներ: Կարասը տեղադրված էր պարսպից դուրս, ուղղահայաց դիրքով: Այն ջարդված էր, ներսում ընկած էր մի մեծ քար:

Աղյուսի հետքեր նկատելի էին նաև Aa43 քառակուսում՝ արևմուտք-արևելք ուղղությամբ: Aʹaʹ44 քառակուսում, աշտարակից 13,30 մ և մակերեսից 5,90 մ խորությամբ, պարզվեց, որ պարսպապատը համարյա ուղիղ անկյան տակ թեքվում է դեպի հարավ-արևելք (նկ. 7): Պատի լայնությունը թեքվող մասում կազմում էր 2,80 մ:

Aa43 քառակուսում, 5,30մ խորությամբ, համարյա պարսպապատի հիմքի մակարդակին բացվեց կավե հարթակ (այրված կավ): Նույն տեղում գտնվեցին անտիկ խեցեբեկորներ:

Ա՛ա՛44 քառակուսում, թեքված պատի արևելյան հատվածում, լիցքը բաղկացած էր միջին և փոքր քարերի ու կավահողի խառնուրդից (հավանաբար թափված պարսպամիջուկն էր), իսկ Ա՛ա՛42-43 քառակուսիներում հիմնականում փափուկ կավահող էր (միայն պարսպապատին կից մասերում պինդ քարախիճ է): Թեքված պատի «ծիծեռնակապոչ» կապերը բավականին խոր (10-12 սմ) ու մեծ էին:

Հում աղյուսից կերտված պատի մեծ զանգվածի, պարսպապատից դուրս տեղադրված նույն հում աղյուսով իրականացված առանձին հատվածների 2012թ. գյուտերը հիմք են տալիս եզրակացնելու, որ աղյուսաշար պատերը կառուցվել են ավելի ուշ, քան պարիսպը: Հավանաբար Ա՛ա՛41 քառակուսու մեջ բացված հատվածը ինչ-որ կառույցի մաս է, որի արևմտյան պատը կլոր աշտարակից հարավ ձգվող քարաշար էր (որի վրա ևս աղյուսաշար էր), իսկ արևելյանը՝ աղյուսաշար: Ի դեպ՝ այս պատի հարավային հատվածի ուղղաձիգ անցքը, թերևս, փայտի գերանի տեղադրման համար էր:

Թեքված պատի առջևի լիցքում, 8,10 մ խորությամբ, գտնվել է բջջաձև դասավորված, օվալաձև տաշվածքներով վաղմիջնադարյան ապակյա անոթի մի բեկոր: Նման օրինակներ լավ հայտնի են Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձաններից՝ Դվին, Գառնի և այլն[27]:

Պարզվեց, որ աղյուսաշար պատից արևելք գտնված հարթակով հատվածը՝ 4,5 մ խորությամբ, ունեցել է հետևյալ չափերը՝ արևելք-արևմուտք՝ 3,60 մ, բացված հողազանգվածից մինչև պարսպապատը՝ 2,55 մ:

Աղյուսաշեն միջնապատից արևելք, Aa43 քառակուսում, հարթեցված պատի վրա հետաքրքիր շերտագրություն է ընթերցվում, որը թույլ է տալիս որոշակի դիտարկումներ կատարել: Այստեղ 5,30 մ խորությունում բացվեց ժայռի հիմքը (նկ. 8/1), որի վրա կրախճային զանգվածի հետ կար նաև սև հողաշերտ (նկ. 8/2): Դրան հաջորդում է 60-80 սմ հզորությամբ կավաշերտ (նկ. 8/3): Հաջորդը ներառում էր ինչպես սպիտակ կրային զանգված, այնպես էլ փոքրաչափ քարեր: Այս շերտը որոշակի թեքություն ուներ՝ երևի փլվածք էր (նկ. 8/4): Մյուսը մոտ 20-40 սմ հզորությամբ լոկալ կավաշերտն էր՝ առանց որևէ մասնիկների (նկ. 8/5), որի վրա էր փոքր քարերից և կրաշաղախից բաղկացածը (նկ. 8/6): Քարաշերտը մոտավորապես 2-4 սմ հզորությամբ մոխրաշերտի վրա էր և ամբողջ մակերեսով ծածկում էր այն (նկ. 8/7): Ժայռի հիմքից 90 սմ բարձրության վրա մոխրաշերտը կրկնվում է նույն հզորությամբ, սակայն այն աստիճանաբար վերածվում է մուգ նարնջագույնի (նկ. 8/8), ինչը փաստում է կավաշերտի շիկանալու մասին: Կտրվածքում սրա վրա երկու քար կար ընկած: Ըստ ամենայնի դրանք նույնպես փլվածքի հետքեր են: Վերը կրկին հզոր կավաշերտ էր (նկ. 8/9):

Պեղումները զուգահեռ աշխատանքներ սկսվեցին նաև Aa44 քառակուսում: Ճմահողը հեռացնելուց հետո, որոշակի խորությունում, հիմնական պատին

27. Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, Եր., 1982, տխտ. 32/2: Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A., Armenia in the cultural context of East and West. Ceramics and Glass (4 – 14th centuries).Yerevan, 2009, fig . 27/1-4, 5-8, 47/12.

կից բացվեց այլ շարվածքով մի պատ (բացվածի երկարությունը մոտավորապես 1,45 մ էր, պահպանվել էր քարերի 4 շարք), որը տարբերվում էր հիմնական պարսպապատից և շինարարական լուծումներով տարբերվում էր վերջինից: Պատը կառուցվել է խոշոր քարերից, որոնց արանքում ավելի մանր քարերով լիցք էր արված: Պահպանված վերջին վերին շարքը ավելի փոքր և հավասար քարերից էր, կարծես հարթեցված, մի մակարդակի էր բերված հիմնական պարսպապատի հետ, կամ հիմք էր կավաշեն շարվածքի համար: Այն, անկասկած, ուշ վերակառուցման արդյունք է:

Նույն քառակուսում՝ դեպի արևելք, 6,50 մ խորությունում բացվեց տարբեր չափի (հիմնականում՝ խոշոր) քարերի լիցքի շերտ, որը հեռացնելուց հետո գտնվեց պարսպապատի շարունակությունը (նկ. 9): Խեցեղենը գրեթե բացակայում էր: 6,90 մ խորությունում հիմնականում լիցք էր, քարեր հազվադեպ էին հանդիպում, դուրս էին գալիս ինչպես գունազարդ, այնպես էլ կոպիտ, խոհանոցային խեցեղենի բեկորներ: Այս շերտում փաստագրվել են նաև ոսկորներ և ածուխի կտորներ: Նույն քառակուսում՝ 7,30 մ խորությունում, գտնվեց կանաչ հասպիսից իլիկի գլխի կես (տրամագիծը՝ 4,2 սմ, անցքի տրամագիծը՝ 1 սմ, նկ. 10): Այս քարատեսակը լայնորեն տարածված է Խաչենագետի ավազանում, հանդիպում են դրա ինչպես կանաչ, այնպես էլ կարմիր, հազվադեպ՝ դեղին տեսակները: 7,50 մ խորության վրա էր 10-20 սմ հզորությամբ կրախճային շատ ամուր շերտը, որի տակ բացվեց պարսպապատի քարի երկու բլոկ, խեցեղենը գրեթե բացակայում էր: Պարսպապատը շարունակվում էր A՛a՛45 քառակուսում: Արդեն 8,30մ խորությունում դեպի արևելք, բացվեցին պարսպի ժայռափոր հիմքերը, իսկ 9 մետրում՝ պարսպի ևս երկու կվադրեր:

1բ. Նյութական մշակույթ

2012թ. պեղումների միջոցին Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատի հատվածում գտնվել են տարբեր տեսակի ու չափի անկանք ու կանթավոր սափորների, թաս-փիալաների, քրեղանների, կարասների, տափաշշերի բեկորներ:

Սափորները (նկ. 11-12) պատրաստված են մանրահատիկ, ավազախառը և կրախառը լավ հունցած կավից: Թրծումը ինչպես հավասար, այնպես էլ անհավասար է: Կան նաև խոշորահատիկ կավից պատրաստած սափորներ: Ունեն կանթեր, կլորավուն շուրթը թեքվում է ներս: Մեկ մեծ սափորի (պսակի տր. 12 սմ) միջին չափսի վիզն ավարտվում է դեպի դուրս թեքվող կլորավուն եզր ունեցող շուրթով: Գտնվել է նաև միականթ փոքր սափորի պսակ (տր. 8սմ): Կտրվածքում կլոր կանթն սկսվում է կլորավուն շուրթից և իջնում ուսին, խեցին կտրվածքում եռաշերտ է:

Զարդանախշերն արված են դարչնագույն ֆոնի վրա: Երկրաչափական նախշերը զուգահեռ գծերից կազմված գոտիներով են (երկու կամ երեք մուգ դարչնագույն, համարյա կարմիր, լայն ու նեղ գծեր, շղթայաձև գոտիներ, շևրոններ, զիգզագներ, ալիքաձև, աստղաձև կամ ճառագայթաձև նախշեր): Գոտուց ներքև անցնում է շղթայաձև նախշ, որից ներքև կա զուգահեռ գծերով ևս մի գոտի: Գունազարդումն անգոբի վրա է և փայլեցված: Խեցին դեղնավուն է, հաստությունը՝ 0,5-1,4 սմ: Հիմնականում պատրաստ-

ված են ձեռածեփ, բայց կան օրինակներ՝ պատրաստված դուրգի վրա (ներսի գույնը գորշ):

Թասերը (պսակի տրամագիծը՝ 14-22 սմ, բարձրությունը՝ 6–10 սմ, նկ. 13) հիմնականում զարդանախշված են ներսից՝ երկու կամ երեք զուգահեռ կարմիր կամ դարչնագույն շրջաններով: Լայն իրանով թասերի պսակները միանում են իրանին հիմնականում խոր ակոսով և պատրաստված են կրախառն մանրահատիկ կավից:

Հետաքրքիր են օմֆալով և նստուկով թասերը: Դրանցից մեկն ունի 3 սմ տրամագծով և 0,7 սմ բարձրությամբ օմֆալ: Կավը շատ խիտ է, լավ հունցած ու հավասարաչափ թրծած: Կավի հաստությունը հատակի մասում 0,3սմ է, դեպի կողերը՝ 0,5 սմ: Երկրորդը պատրաստված է դուրգի վրա, դեղնավուն մանրահատիկ լավ հունցած կավից: Թրծումը հավասար: Նստուկի տրամագիծը՝ 7,5 սմ:

Անոթների մակերեսներն անգոբապատ ու փայլեցված են, ունեն բուսական և երկրաչափական նախշեր՝ կարմիր կամ դարչնագույն ներկով՝ բաց ֆոնի վրա:

Քրեղանները թեք կամ ուղիղ կտրած, դեպի դուրս կամ ներս թեքված պսակով են (տր.՝ 18-28 սմ): Կավը՝ կրախառն, խոշորահատիկ ու մանրահատիկ, լավ հունցած, թրծումը՝ հավասարաչափ, դրսից անգոբապատ մակերեսով: Հաճախ պսակի և իրանի միացման հատվածում և դրսից շրթի տակ ակոս է արված (նկ. 14):

Գտվել են նաև մեծ տաշտի՝ դեպի դուրս թեքված մրճաձև շուրթի բեկոր՝ պատրաստված լավ հունցած, կրախառն, անհավասար թրծած, խիտ կավից, մանրահատիկ կավից՝ ձկնամանի շուրթ, սևափայլ, փոքր կճուճ (տր.՝ 6 սմ):

Խեցեղեն առարկաներից բացի, գտնվել են երկաթե իրի բեկոր (հավանաբար՝ դանակի ծայր), կավե երկկոնաձև մեծ ուլունք, երկաթե առարկայի կտորներ, վանակատե դանակի շեղբ:

Միջնադարյան նյութերը հիմնականում խեցեբեկորներ են, որոնց մեջ կարելի է առանձնացնել վաղ միջնադարյան կարասի իրանի բեկորը՝ դրոշմազարդված վերադիր, պարանահյուս երկու գոտով և եռանկյունաձև նախշով, ինչպես նաև կարասի իրանի բեկորը՝ վերադիր, եռանկյունաձև դրոշմազարդով:

2. Անտիկ առաջին թաղամասի պեղումները (նկ. 15)

Քաղաքի այս տեղամասի ընտրությունը պայմանավորված էր Ղարաբաղյան պատերազմի ժամանակ այստեղ փորված խրամատների առկայությամբ, որոնց կտրվածքներում նկատվել էին պատերի, թոնիրների և հորերի մնացորդներ, շուրջը սփռված էր խեցեղեն բեկորների մեծ քանակություն:

2010թ. անտիկ դամբարանադաշտի փնտրտուքների ծիրում այստեղ պեղվել էր վաղ միջնադարյան քարարկղային մի դամբարան (Հ. Պետրոսյան) և անտիկ կառույցների մի հատված: Դամբարանն անտիկ մշակութային շերտի մեջ էր՝ արևմտյան նեղ կողով հենված անտիկ շինության պատի արևելահայաց երեսին: Դամբարանի կառուցման ժամանակ վնասվել էին ոչ

միայն նշված պատը, այլև անտիկ մշակութային շերտը:

2012թ. պարբերական պեղումների համար ընտրվեց դամբարանի շրջակա տարածքը, նշագծվեցին հնագիտական ընդհանուր ցանցին համապատասխան քառակուսիներ: Աշխատանքներն սկսելու համար նախ առանձնացվեց Mi94-95, Mj94–95, հետո ավելացվեցին Mi92, 93, 95, Mj92-95, Na92–95 քառակուսիները և պեղվեց 300 քառ. մետր տարածք: Ողջ տարածքը մաքրվեց ճիմահողերից, քարերի և հողաթմբերի կուտակումներից: Այստեղ անկյունագծով՝ արևելքից-արևմուտք, ձգվում էր խրամուղին և դրան տեղ–տեղ կցած խրամհորերը, որոնց փորման հետևանքով էլ առաջացել էին հողաքարային կուտակումներ: Պեղավայրի եզրերը 0,50–0,70 մ ժապավենաձև մաքրելուց հետո սկսվեցին Mj94 և Mi94 քառակուսիների պեղումները՝ յուրաքանչյուրը չորսական միավորով: Հենց սկզբնական բահահողից (0,25 սմ), որը ճիմահողի տակի սևահողային շերտն էր, ի հայտ եկան մեծ քանակությամբ անտիկ խեցեղեն բեկորներ: Mj94 քառակուսու արևելյան հատվածի պեղման միավորում մաքրվեց 2010թ. բացված, հյուսիս-հարավ ձգվող պատի հինգ մետրանոց հատվածը և պարզ դարձավ, որ այն երկու կողմից շարունակություն ունի: Հյուսիսային կողմից պատի շարունակությունը բացվեց Mi94 քառակուսում, որտեղ այն ձգվելով ևս 2,40 մ, ուղիղ անկյունով թեքվեց արևմուտք: Սա բացված պատի արևմտյան թևի 3,30 մետրանոց պահպանված մասն էր միայն: Այն ուներ երկզրահանի շարվածք՝ 0,80մ լայնությամբ, իրականացված ճեղքած կրաքարի մեծ ու միջին կտորներից՝ և կավահողային միջնալիցքով. այստեղ ձևավորվեց վերին շերտի սենյակի անկյունը (նկ. 16): Mj94 քառակուսում բացվեց ստորին շերտի պատին ուղղահայաց, արևմուտք-արևելք ձգվող մի պատի 1,85մ երկարության հատվածը (լայն. 0,90մ)՝ կառուցած նույն տեխնիկայով: Այստեղ ձևավորվեց մեկ այլ սենյակի հյուսիսային կես, որի արևմտյան պատի հետքերը չհայտնաբերվեցին: Հյուսիսային այս պատի երկու երեսների մաքրման միջոցին նկատվեց, որ դրա ստորին երկու շարը որոշակիորեն մշակված միջին չափի քարերով են: Սրանք ծածկված էին 0,10 մ թանձրության կավաշերտով, որի վրա բարձրանում էր շեղ դրած սալերով երրորդ շարը, իսկ չորրորդը կրկին խորանարդին մոտեցող մշակմամբ քարերով էր: Ստորին պատը պահպանված էր 4,50 մ, վերինը՝ 3,60 մ երկարությամբ (նկ. 17): Ստորին պատի մակարդակում հայտնաբերված խեցեղեն նմուշները՝ գոտեզարդ-տափաշշերի, կիսագնդաձև գավաթների, ներծկված կողով և կլոր շուրթերով թասերի, ըմպանակների, ներմուծված կարասի կանթի և այլ բեկորներ վերաբերում են Ք.ա. I- Ք.հ. I դարերին (նկ. 18):

Շինարարական տարբեր հնարքների կիրառման առկայությունը, որը դիտարկվեց նաև մյուս կառույցների մաքրման ժամանակ, ինչպես նաև հնագիտական նշված նյութը հնարավորություն տվեցին հավաստելու բնակավայրում ոչ միայն շինարարական, այլև ժամանակագրական տարբեր շերտերի գոյության մասին:

Բացվեց սենյակի կավակերտ, լավ տոփանված հատակը՝ բնորոշ կրաքարային հատիկների պարունակությամբ: Այն պահպանված էր տարածքի վերին մակերեսից 1,20 մ խորությունում, 2,70x1,60 մ չափերով: Հատակը

բարձրացված էր մինչև հյուսիսային պատի ստորին երկրորդ շարը՝ պատի ամրությունն ապահովելու նպատակով: Հատակին, իրարից 2,70 մ հեռավորությամբ, մխրճած էին քառակուսի, հարթ սալեր՝ գուցե տանիքը պահող փայտե սյուների համար: Սրա հատակի շարունակությունը բացվեց նաև Mj93 քառակուսում, որի մեջ խրված էր կրաքարե սանդքար (տրամ.՝ 0,60 մ):

Mj93 քառակուսու տարածքը ուշ ժամանակաշրջանում ավելի ինտենսիվ էր յուրացվել: Դրա պեղումները ցույց տվեցին, որ քննարկվող շինության ողջ արևմտյան հատվածը ոչնչացված է միջնադարում, այստեղ տնտեսական գործառույթ ունեցող շինություն կառուցելու ժամանակ, քանի որ տարածքում բացվեցին հատակի վրա ճզմված կարասների բեկորներ, վերևից իջեցված մի քանի թոնիրներ (տր.՝ 0,45, 0,60, 0,55 մ), որոնք ճեղքել էին անտիկ մշակութային շերտը և նստել սենյակի կավե հատակին, իսկ մի դեպքում՝ սենյակի հյուսիսային պատի արևմտան եզրին՝ պատճառ դառնալով դրա ավերմանը:

Այս քառակուսու արևմտյան հատվածում մաքրվեց հյուսիս–հարավ ձգվող, մեծ, անտաշ քարերից շարված պատ, որը 0,80 մ բարձրություն ունեցող հողաշերտի վրա էր: Կտրվածքին պարզորոշ ընթերցվում էր բնակավայրի շերտագրական պատկերը. 1-ին շերտ՝ միջնադարյան պատով և պատի մակարդակով հայտնաբերված միջնադարյան, խեցեղեն բեկորներով, 2-րդ՝ կավաշերտի 0,15 մ հաստությամբ զանգված, 3-րդ՝ մոխրի ու ածխի հետ խառը մշակութային շերտ և 4-րդ տոփանված կավային հիմնահող հատակի կավաշերտ: Հատակին և մոխրախառն մշակութային շերտից դուրս էին միայն անտիկ մշակույթի վկայությունները: Այս պատի հարավային եզրը կլորավուն անկյունով թեքվեց և շարունակվեց հաջորդ՝ Mj92 քառակուսում:

Mj92 քառակուսում ճիմահողի և դրա տակի սևահողի հեռացնելուց հետո բացվեց քարալիցքերի որոշակի շարվածքների մի բարդ հանգույց: Մեծ դժվարությամբ այն մաքրվեց և թափվածքները տեղափոխվեցին, արդյունքում բացվեց միջնադարյան պատի շարունակությունը, դրան զուգահեռ մեկ այլ, բավական կանոնավոր պատ՝ շարված իրար վրա դրված տափակ թերթաքարերով: Քառակուսու կենտրոնական մասում՝ 0,70 մ խորությունում մաքրվեց նաև 0,60 մ լայնություն ունեցող, մանրաքար շարվածք, որը 0,25 մետրանոց կավաշերտի վրա էր: Բոլոր պատերն ուշ ժամանակաշրջանի էին թե՛ իրենց շինտեխնիկայով, թե՛ այդ միջավայրից հայտնաբերված խեցեղեն նմուշներով: Դրանք չափագրելուց և լուսանկարելուց հետո մի մասը հեռացվեց, մաքրվեց դրանց ծածկող կավաշերտը և սկսեց երևալ արևելք-արևմուտք ձգվող, կանոնավոր մշակված, մեծ ու միջին չափի քարերից կառուցած երկզրահ պատը: Այն ուներ 0,75 մ լայնություն, պահպանվել էր 0,30 մ բարձրությամբ: Պեղումներով բացվեց դրա 4,50 մ երկարությունը, իսկ շարունակությունը, որը ձգվում է արևմուտք, կբացվի Mj91 քառակուսու պեղումների միջոցին: Սրա հարևանությամբ և դրա մակարդակում հայտնաբերված խեցեղենը հելլենիստական է և ուշ անտիկ: Բացի խեցեղենից, այստեղ գտնվեցին նաև սարդոնիկե ուլունք, օձաքարից պատրաստած ինչ-որ անոթի հատակամաս, ոսկրե սրածայր գործիք: Պատը և մշակութային մնացորդները հայտնաբերվեցին տարածքի արտաքին մակե-

ռեսից 1,20 մ խորը, բնահողի (գրունտ) վրա (նկ.19):

Mj գծի վրա պեղված վերջին քառակուսին 95-ն էր: Սրա հետազոտությունը ցույց տվեց, որ այն զուրկ է շինարարական մնացորդներից՝ բացառությամբ քառակուսու արևմտյան սահմանագծով ձգվող, քաղաքային թաղամասի պեղվող այս հատվածի հիմնական շինության արևելյան պատի կենտրոնական մասից: Մաքրվեցին նշված պատի երեսները՝ պահպանված երեք շարքով, պարզեց պատի լայնքը՝ 0,70 մ իր ողջ՝ 5,0 մ երկարությամբ: Քառակուսին մաքրվեց մինչև բնահող, որի մեջ էր վաղ միջնադարյան թաղումը: Ի տարբերություն շինարարական հետքերի, նյութական մնացորդներն այստեղ շատ առատ էին: Բացի վերևի խառը նյութերից, 0,60 մ խորությունից սկսած շերտը դարձավ զուտ անտիկ և ընձեռեց շատ հետաքրքիր, թվագրող խեցեղեն նմուշներ՝ փայլեցրած, գունազարդ տափաշշերի, կաթսաների, ձկնամանների, կիսաձվաձև գավաթների, ըմպանակների, կճուճների, ծծումի և այլն բեկորներ: Սրանց հետ գտնվեց ներմուծված սափորի վզի բեկոր՝ շատ խիտ ու մաքուր, կարմիր խեցով և սև լաքապատ արտաքինով (նկ. 20):

Քառակուսու նախավերջին շերտում, 1,05 մ խորությունում, մաքրված կավաշերտի զննությամբ համոզվեցինք, որ հեռացվում են թափված աղյուսներ: Տեղ–տեղ դրանք ծածկված էին 0,10մ հաստության մոխրաշերտով, որը քառակուսու արևելյան մասում դարձավ համատարած:

Շինարարական հետքերը բացակայում էին նաև Mi95 քառակուսում: Այստեղ վերին սահողի շերտը շատ թանձր էր, դրա հեռացումից հետո հայտնաբերվեցին նախ՝ միջնադարյան ու անտիկ, խառը խեցատներ, ապա՝ արդեն միայն հելլենիստական և ուշ անտիկ բեկորներ:

Mi94 քառակուսու բնահողի առաջին իսկ շերտից սկսեցինք հանել մեծ քանակությամբ հասարակ, գունազարդ, սևափայլ և նույնիսկ ջնարակած անտիկ անոթի բեկորներ: Այստեղ մինչև հիմնահող, բացվեց վերը նկարագրած, հիմնական շինության արևելյան պատի շարունակությունը՝ հյուսիս-արևելյան անկյունով և հյուսիսային թևով, որի կեսը բարձրացված էր տարածքի հիմնահողի վրա, իսկ հյուսիսային պատի (երկ.՝ 3,30 մ, լայն.՝ 0,80 մ)՝ մանր ու միջին չափերի ճեղքած քարերից կառուցած միաշար հատվածը դրված էր կավախառը, 0,85 մ բարձրությամբ հողաշերտի վրա: Այս շերտը լի էր անտիկ խեցատներով:

Քառակուսու հարավային սահմանագծի վրա, 0,70 մ խորությունում մաքրվեց արևելք-արևմուտք ուղղված նոր պատ (երկ.՝ 1,85 մ, լայն.՝ 0,90մ): Սրա ներքին երկու շարերը, որոնք ավելի լավ էին պահպանված, քան վերինը, ծածկված էին 0,10 մ կավահողի լիցքով, մեջը՝ անտիկ խեցատներ, իսկ դրա վրա բարձրանում է մանր, ճեղքած քարերով, հողաշաղախով ուշ պատը: Սրա և Mj94-ում բացված սենյակի հյուսիսային պատի միջև կարծես ձևավորվել էր մեկ մետր լայնք ունեցող միջանցք:

Այստեղ և մյուս հատվածների ստորին շերտերը հարուստ էին անտիկ խեցեղենով՝ բազմատեսակ թասեր, դրանց թվում՝ հատակները ծաղկապսակաձև հարդարված օրինակներ, երեքնուկաձև և կլոր շուրթերով սափորներ, կլոր կամ օմֆալ նստուկով գավաթներ, գունազարդ և սևափայլ ըմպա-

նակներ, ծորակավոր, սևափայլ և գունազարդ սափորիկներ, հայելափայլ, սև արտաքինով, ներքուստ «ողկուզակիր» գոտիներով հարդարված գավաթներ և այլն (նկ. 21):

Mi93 քառակուսու մեջ, որոշակի մակարդակով, մաքրվեցին այդտեղով անցնող խրամատի երկու կողմերում բարձրացող հողաթմբերը՝ տարածքի համահավասարեցման նպատակով: Պեղվեց քառակուսու հյուսիսային մասը, որտեղ ճիմահողի տակ 0,30 մ կավահողի շերտ էր: Սրանից ցած, մինչև հիմնահող, արդեն անտիկ մշակութային շերտն էր: Կենտրոնական մասում մաքրվեց հարևան քառակուսուց շարունակվող տարաժամանակյա շերտերով պատի ստորին՝ անտիկ շարը՝ մեկ մետրի չափով, և ընդհատվեց: Քառակուսու հյուսիսարևմտյան հատվածում սևահողի տակ բացվեց խոշոր քարերից շարված, անկանոն ուշ պատի մի հատված, որը դրված էր ստորին շերտի շատ կանոնավոր կառույցի հարավարևելյան անկյան վրա, 1,10 մ խորությունում: Կառույցի այս անկյունն ուներ ներքին 2,40x1,60 մ չափեր, 0,81մ և 0,65 մ լայնությամբ պատեր: Այն լցված էր փխրուն մոխրի, մանր ածուխների պարունակությամբ լիցքային հողով: Սենյակից հայտնաբերվեց անտիկ, կիսածվածև գունազարդ գավաթ (նկ. 22), շուրթերի տարբեր լուծումներ ունեցող թասերի, սկուտեղների և այլ անոթների բեկորներ, մարմարյա անոթի շուրթի փոքր բեկոր, բրոնզե երկու նետասլաք՝ սկյութական տիպի (նկ. 23), մատանու կես, դանակատիպ ոսկրե գործիք և այլն:

Mi92 քառակուսին, նախորդի նման, խրամատով բաժանված էր երկու մասի: Երկու կողմերում հեռացնելով 0,60 մ բարձրությամբ հողաշերտը, հասանք կավաշերտին, որի մաքրման միջոցին խեցեղեն մնացորդները դեռևս առատ չէին, բայց գտնվեց սևափայլ, «ողկուզակիր» գավաթի շուրթի բեկոր, սևախեցի, փորագիր զարդերով և կոճակատիպ ծեփվածքով հարդարված սափորի բեկոր, ամբողջացող զանգակաձև կափարիչ և այլն:

Աշխատանքների ավարտի պատճառով, քառակուսու պեղումներն այս մակարդակում դադարեցրինք:

Na գծի քառակուսիների պեղումներն սկսեցինք Na95–ից: Այստեղ, այնպես, ինչպես հյուսիսից հարևան քառակուսիներում, կառույցների հետքեր չբացվեցին, բացառությամբ արևմտյան սահմանաեզրով մաքրվող, հիմնական շինության հարավարևելյան անկյունից: Ստացվում է, որ կամ այս տարածքում կառույցները դեպի արևելք զարգացում չեն ունեցել, կամ տարածքը եղել է բաց, կամ գուցե այստեղով անցել է փողոց: Այս հարցերի պատասխանը կտան ապագա պեղումները: Քառակուսին մյուսների նման հարուստ էր հելլենիստական խեցեղենին բնորոշ բեկորներով:

Na94 քառակուսում մաքրվեց հիմնական շինության առաջին սենյակի հարավային պատը: Այն երկզրահ էր, կավաքարալիցքային միջուկով, նման ստորին շերտում բացված անտիկ մյուս պատերին: Ցավոք, այս պատի, ինչպես նաև սենյակի արևմտյան հատվածները իսպառ ոչնչացած էին: Պատի վերին շերտում պահպանվել էին ուշ շրջանի շարվածքների հետքեր: Քառակուսին պեղվեց մինչև հիմնահող, այլ շինություններ չբացահայտվեցին, բայց գտնվեցին անտիկ դարաշրջանի խեցեղենի փայլուն նմուշներ և թրծակավային նվիրատվական արձանիկի բեկոր (նկ. 24):

Na93 քառակուսին տարբերվեց նախորդից. հենց սևահողի հեռացումից հետո, 0,30մ խորության մեջ բացվեց արևելք-արևմուտք ձգվող երկզրահ պատի մի հատված՝ շարված կոպտատաշ քարերից՝ քարահողային լիցքով (երկ.՝ 1,20 մ, լայն.՝ 0,90 մ): Բահահող շերտից հետո բացվեց հյուսիս–հարավ ուղղվածության մեկ այլ պատ (երկ.՝ 1,90 մ, լայն.՝ 0,70 մ), որն անցնում էր առաջին պատի վրայով: Նոր պատի արևելահայաց կողմում գտնվեց մեծ կարասի իրանի և կճուճի բեկորներ: Կճուճը ձգված համամասնություններով, միականք, անփայլ, բաց գույնի անոթ է (բարձր.՝ 0,16 մ, շուրթի տր.՝ 0,12 մ, նստուկի տր.՝ 0,10մ), որը բնորոշ է ուշ անտիկ–վաղ միջնադարյան մշակույթին: Այս թվագրման օգտին էր հաջորդ շերտի վիճակը: Նախկին պատերի միջավայրում, 0,86 մ խորությունում մեջ ուրվագծվեց հյուսիս–հարավ ձգվող պատին ուղղահայաց շարված երրորդ պատը, և այստեղ երևաց ուղղանկյուն սենյակի մի հատված: Սենյակի հատակի մակարդակում դուրս եկավ անտիկ խեցեղեն՝ գունազարդ կաթսա, դուրս ձգված շուրթերով թասեր, պնակներ, ձկնամաններ, երեքնուկածև շուրթով սափորներ և այլն (նկ.25):

Քառակուսու համարյա ողջ տարածքով փաստագրվեց նաև կավակերտ, տոփանված հատակ, որի կտրվածքում երևում էր թարմացված երեք շերտ: Այս ամենը՝ երեք փոխուղղահայաց պատերի տեղադրությունը 0,70–1,20 մ խորությունում, անտիկ նյութերի միջավայրում, հնարավորություն տվեցին եթադրելու, որ այստեղ գոյություն ունի անտիկ դարաշրջանի երկու շինարարական շերտ: Այս վարկածը, կարծում ենք, կհաստատվի հարևան տարածքների պեղումների միջոցով, քանի որ բոլոր պատերը շարունակվում են կից քառակուսիներում:

Mi92 քառակուսին տարածքի վերջինը և ամենահագեցածն էր՝ թե՛ շինարարական, թե՛ նյութական մնացորդներով: Այստեղ ևս շերտագրական նույն հերթականությամբ, 0,20 մետրանոց ճիմահողի հեռացումից հետո, բացվեցին վերջին տարիներին մանր ու միջին, տձև քարերով իրականացրած շարվածքներ, որոնք հեռացվեցին: Դրանց տակ սփռված էր հարևան քառակուսիներից շարունակվող, տարաժամանակյա պատերի մի բարդ իրավիճակ: Հիմք ընդունելով Na93-ից սկսվող կանոնավոր պատի եզրը, սկսեցինք մաքրումները: Պարզվեց, որ այն դրված է 0,15–0,20 մ կավաշերտի վրա, որի կառուցվածքը տարբերվում է հիմնականի միատարր զանգվածից: Փխրուն էր, ուներ հում աղյուսի բաղադրություն ու խտություն և, ըստ երևույթին, բնահողի վրա բարձրացող ստորին պատի վերնամասի մնացորդներն էին: Պատը պահպանվել էր 4,30 մ երկարությամբ և ուներ 0,85մ լայնություն, դրա արևմտյան հատվածը կավահողի վրա շարած սալերի վրա էր: Քառակուսու հարավարևմտյան մասում ձևավորվեց սենյակի անկյուն, որի պատերը պետք է շարունակվեն հարավային և արևմտյան կողմերի չպեղված տարածքներում: Սենյակի ներքին ու արտաքին տարածքների մաքրման ժամանակ թերևս ի հայտ կգա նույն շերտագրական պատկերը՝ ճիմահող, բուն մշակութային շերտ, կավաաղյուսային շերտ, ապա՝ մոխրաշերտ՝ տոփանված հատակին: Սենյակի հարավարևմտյան և հյուսիսարևմտյան անկյուններում բացվեց երկու թոնիր (տր.՝ 0,55 մ, պահպանված բարձ.՝ 0,20 մ,

տր.՝ 0,45 մ, բարձր.՝ 0,06 մ)՝ ածխի և մոխրի մնացորդներով: Առաջինի մեջից դուրս բերվեց կոկիչ և սպիտակ ճարպաքարե սրոցաքար:

Սենյակում անտիկ խեցեղեն բեկորների հետ հայտնաբերվեցին նաև բրոնզե հայելի, հերակալ (նկ. 26, 27), մարգարտախեցու փեղկ, հում կավե տափողակաձև ծանրոցներ, իսկ դրսի պատերի մաքրման միջոցին՝ անտիկ, գունազարդ անոթների կատարյալ նմուշներ, սևափայլ «ողկուզակիր» գավաթի, օմֆալ հատակով, գոտեզարդ ներսույթով ըմպանակների բեկորներ (նկ. 28): Առանձնապես հետաքրքիր են առաջին անգամ հանդիպող հաստախեցի, խնկարկման զանգվածեղ անոթի (նկ. 29) և փողրակի բեկորների գյուտերը, որոնք կարող են լույս սփռել քաղաքի տնտեսական և հոգևոր կյանքի վրա:

Կարելի է նախնական որոշ ընդհանրացումներ կատարել: Նախ՝ բացված շինությունների և դրանցում հայտնաբերված նյութերի քննությունն ու համեմատությունը միջնաբերդի նյութերի հետ, թույլ են տալիս պնդելու, որ անտիկ թաղամասը կառուցվել է միջնաբերդի հետ միաժամանակ, քանի որ երկու տեղում էլ ավելի վաղ շրջանի կառույցների և խեցեղենի հետքեր իսպառ բացակայում են:

Դատելով տարածքում բացված շինարարական մնացորդների՝ իրար հետ ունեցած հարաբերակցությունից՝ կարելի է առանձնացնել երեք ժամանակագրական շրջան: Առաջինը՝ ամենավերինը, միջնադարյան շերտն է՝ փոքր ու միջին չափերի, ճեղքած քարերից շարված, անկյուն կազմող պատերի հատվածներով, որոնք բարձրացված են կամ ստորին մշակութային հողաշերտի, կամ ստորին շերտի պատերը ծածկող կավաշերտի վրա՝ մինչև հիմնահողը իջեցված բազմաթիվ թոնիրներով: Երկրորդը՝ շեղ դրված բազմաձև քարերից շարված պատեր՝ վերին և ստորին շերտերի պատերի արանքում բարձրացված, և այդ պատերի մակարդակով հայտնաբերված ուշ անտիկ խեցեղեն: Երրորդը՝ կավե հիմնահողի վրա բարձրացրած, ամենականոնավոր, խորանարդի ձևին մոտեցրած, քարերից շարված պատեր՝ պահպանված 0,60–0,90 մ բարձրությամբ: Այս պատերի ստորին շարերն ագուցված են տոփանված կավային հատակների մեջ: Դրանք մաքրվել են բոլոր սենյակներում, ունեն ծեփած, սպիտակ ներկած մակերեսներ, որոնց կտրվածքներում երևում են դրանց թարմացման հետքերը: Սենյակների մուտքերը շատ քիչ են բացված, եղածներն էլ շեմեր չունեն, բացի Na92 սենյակի մուտքից, որի երկու կողմի պատերը ձևավորված են երեսները խոշոր, հարթատաշ քարերից, շեմը սալարկված է մանր քարերով:

Թաղամասի հիմնադրման ժամանակ, քանի որ տեղանքի բնահողը կավային է, տարածքը հեշտությամբ հարթեցվել է, ինչը երևում է երկրի արտաքին մակերեսից միևնույն՝ 1,20մ խորության մեջ բացված պատերի հիմքերից:

Պատերը շարված են տեղական, տարբեր չափերի կոպտատաշ, երբեմն էլ հարթատաշ կրաքարերից: Կապակցող նյութը սովորական կավն է:

Պատերի արտաքին ճակատները շարված են ավելի խնամքով՝ կրաքարե բլոկներից, միջնապատերին ավելի քիչ ուշադրություն է դարձված: Շարերի մեջ օգտագործված են նաև ավազաքարն ու գետաքարը:

Ստորին շերտի շինարարական մնացորդների մակարդակում հայտնաբերված հնագիտական նյութերը ձևաբանական, պատրաստման տեխնիկական տվյալներով, նախշազարդման ձևերով վերաբերում են Ք.ա. I – Ք.հ. I դարերին:

Միջին շերտի նյութերը հնարավոր է թվագրել Ք.հ. II-III դարերով: Այս երկու շերտերի խեցեղեն համալիրների (սկուտեղներ, պնակներ, ձկնամաններ և այլն) միջև լուրջ, խիստ փոփոխություններ, ընդհատումներ չեն արձանագրվել, ինչը փաստում է բնակչության նույնատարրության մասին:

3. Բազիլիկ տաճարի հարավային բակի պեղումները (նկ. 30)

2012թ. պեղումների նպատակը նաև բազիլիկին հյուսիսից կից բակի և դրա մաս կազմող արևմուտք-արևելք ձգվող փոսորակի հետազոտությունն էր:

Տիգրանակերտի բազիլիկն ունի 5 մուտք՝ արևմտյան և երկուական հյուսիսային ու հարավային: Քանի որ հյուսիսային մուտքերը՝ այն էլ զույգ, հատուկ չեն Հայաստանի վաղ քրիստոնեական բազիլիկներին, կարելի էր ենթադրել, որ դրանց առկայությունը պայմանավորված է եղել տաճարից հյուսիս՝ կարևոր ինչ-որ շինությունների գոյությամբ: Պարզելու համար որոշվեց հետազոտել հենց այդ տարածքը:

Պեղումներն սկսվեցին 2011թ. պեղվածքից 10 մ հեռավորության վրա, որտեղ փոսորակն էր: Նախատեսվում էր պարզել, թե ինչով է պայմանավորված այդպիսի ռելիեֆը եկեղեցու մոտակայքում՝ Ha, Hb123-124 և Gj123-124 քառակուսիներում: Այստեղ մակերևույթից մոտ 0,50-0,70 մ խորությունում բացվեց IX-X և XI-XIII դդ. հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներով հարուստ մշակութային շերտ: Ավելի խորը՝ մոտ 1,0 մ խորությունում, խեցեղենը համարյա անհետանում էր, խորքում կային ժամանակակից շինարարական աղբի մնացորդներ: Մշակութային շերտերի այսպիսի բաշխվածությունը բարձունքի վրա և դրա շրջակայքում վկայում էր, որ իջվածքը փորվել էր խորհրդային շրջանում, որի հետևանքով մակերեսին են հայտնվել ստորին մշակութային շերտերի մնացորդները:

Միևնույն ժամանակ պեղվածքի արևելյան սահմանի երկայնքով, Ha125, Hb125 և Gj25 քառակուսիներում բացվեց հյուսիս-հարավ ձգվող պատի մի հատվածը, որի կեսը դեռևս գետնի տակ էր: Պահպանվել է իրար հարմարեցված անմշակ քարերից շարվածքի երկու շարքը՝ քարի միջին չափերը 0,55x0,33 մ: Այս պատի երկարությունը 13 մ էր: Պատի շարվածքում և մերձակայքում վավերացվեցին սրբատաշ մի քանի բլոկներ, որոնք ակնհայտորեն պատկանել են բազիլիկին և վերօգտագործվել են դրա ավերումից հետո: Ha124 քառակուսում, այս պատին ուղղահայաց, անցնում է ևս մեկ պատ (արևելքից դեպի արևմուտք ուղղությամբ), որը հարում է վերը նշվածին և զուգահեռ է բազիլիկի հյուսիսային պատին: Այստեղ իրադրության պարզաբանման համար 2011թ. պեղվածքը շարունակվեց և միացվեց Ha125, Hb125 և Gj125 քառակուսիների տեղանքին:

Բազիլիկի հյուսիսային բակում բացահայտեցինք վառ արտահայտված մշակութային երեք շերտ: Վերևից առաջին շերտը գտնվում է մակերեսից մինչև 1,0-1,5 մ խորության վրա և վերաբերում է XII-XIII դարերին, երկրոր-

դը, որ պատկանում է X-XI դարերին, հասնում է մինչև 2,1 մ խորություն՝ բազիլիկին կից սալահատակը, երրորդ՝ ստորին շերտը, վերաբերում է V-VII դարերին: Պեղվածքի կտրվածքներում, գործնականում ողջ տարածության վրա, լավ երևում է երկու մոխրաշերտ, որոնցից մեկը համընկնում է XII-XIII դդ. մշակութային շերտի հետ, իսկ երկրորդը պեղվածքի հիմնական խորությունից 0,50 մ վեր է:

Դեռևս 2010թ. Hc124, 125 քառակուսիներում մակերևույթից 2,0 մ խորությունում բացվել էր երկու խոշոր թոնիր, որոնց հատակն իջնում էր մինչև բազիլիկի շրջակայքի հիմնական պեղվածքի հատակը: Թոնիրների խորությունը 0,95 և 0,80 մ է, տրամագիծը `1,10 և 1,20 մ (նկ. 31): Երկու թոնրի պսակների շուրջ կարելի է տեսնել նաև լավ հարթեցված հարթակ, մեկի մոտ՝ կավից պատրաստված ուղղանկյուն փոս, ինչն օգտագործվել է հացթուխի ոտքերը հարմար տեղավորելու համար: 2012թ. պեղումները, որոնք բացեցին թոնիրների ընդարձակ շրջակայքը, ցույց տվեցին, որ այս մակարդակը համապատասխանում է XII-XIII դարի բակին և մակերեսից 1,5-2,0 մ խորությունում է: Այն հատկապես լավ է տարորոշվում բազիլիկի հյուսիսային կողմում, որտեղ այն լավ հարթեցված գրունտով է՝ տեղ-տեղ խեցեբեկորների բարձր պարունակությամբ: Դրան զուգահեռ, նույն խորությամբ, անցնում է սև մոխրաշերտ, որի հաստությունը որոշ տեղերում շուրջ 0,5-0,7 մ է: 2012թ. պեղվածքում այս շերտը լավագույնս երևում է Hc124 քառակուսում՝ երկու մեծ թոնրի շրջանում և Hb, Hc123 քառակուսիների կտրվածքում՝ երկու գոտու տեսքով:

2012թ. Gj124 քառակուսում բացվեցին ևս մեկ խոշոր թոնրի մնացորդներ, որը չափերով մոտ է նկարագրածներին: Hb123 քառակուսում հայտնաբերվել են նաև փոքր օջախի հետքեր (տր.՝ 0,50 մ, պահպանված պատի բարձր.՝ 0,30 մ):

Hb123 քառակուսում, մակերեսից 1,5 մինչև 2,0 մ խորությունում, այսինքն՝ XII-XIII դդ. մշակութային շերտում, բացվեց սենյակի լավ հարթեցված հատակ, որի մի մասը ծածկված է կավով: Այս սենյակի մի մասը հայտնաբերվել էր 2011թ., մնացածը՝ 2012թ. պեղումներով: Պատերն անմշակ քարերի շարվածքով են՝ դասավորված երկշարք՝ իրարից 0,80 մ հեռավորությամբ (նկ. 32): 2011թ. բացված պատի երկարությունը 2,60 մ է, իսկ հյուսիսայինինը և արևմտյանինը համապատասխանաբար 3,07 և 2,32 մ: Պատերի շարվածքում, բացի այլ բեկորներից, գտնվել է ոչ մեծ կվադր՝ անտիկ «ծիծեռնակապոչ» կապի հետքերով, ինչը վկայում է, որ շինանյութի մի մասը բերվել է Ամրացված թաղամասից, որտեղ, ամենայն հավանականությամբ, դեռևս տեսանելի էին ամրոցի ավերակները: Hb123 քառակուսու սենյակում հայտնաբերվել է աղորիք, վաղ քրիստոնեական թևավոր խաչի և վանդականախշ խոյակի բեկոր՝ կրակի հետքերով (նկ. 33): Դրանք, հնարավոր է, ժամանակին զարդարել են հյուսիսային բակի կոթողը, որից տեղում պահպանվել են միայն որմնախարսխի առանձին հատվածներ և սյան պատվանդանը:

2012թ. ավելի ընդարձակեցինք պեղումների տարածքը նաև Hc124 քառակուսում, ուր նախորդ տարի բացվել էին կոթողի մնացորդները: Այստեղ,

մակերևույթից 2,10 մ խորությունում երևան եկան սալահատակ բակի մնա - ցորդները: Բակը խնամքով պատված էր կրաքարի սպիտակ սալիկներով, իսկ տեղ-տեղ երևում էր լավ հարթեցրած կրապատ հարթակը: Սալապատ-ման ընդհանուր մակերեսը 3,80 քառ. մ էր: Պահպանվել էր մասնակի՝ պեղ-վածքի հյուսիսային գծի երկայնքով ձգվող երիզի տեսքով (նկ. 34): Hc, Hb124 քառակուսիներում ամբողջացվեց կոթողի սրբատաշ հիմնախարիս - խը: Կառույցի հարավային եզրից 0,67 մ հեռավորությամբ, հողի մեջ հայտ-նաբերվեց քարե, մոնոլիտ խորանարդ (չափերը՝ 0,85x0,81x0,87 մ)՝ նման վաղ քրիստոնեական առանձին կանգնած խաչակիր կոթողների պատվան-դանի (նկ. 35): Խորանարդի հիմքից 0,35 մ բարձրության վրա երևում էր երիզ, ինչը վկայում է, որ այն այդ չափով ամրացված է եղել հողի կամ ինչ-որ կառույցի մեջ: Վերին նիստին առկա է սյան ամրացման համար նախա-տեսված կլոր անցք:

Կարելի է ենթադրել, որ բազիլիկի հյուսիսային բակում կանգնեցված է եղել վաղ քրիստոնեական խաչակիր կոթող: Որպես կանոն, այս տիպի հու-շակոթողները կազմված են որմնախարսխից, խորանարդաձև պատվանդա-նից, սյունից, որն ավարտվում է խոյակով, խաչակալով և խաչով:

Ինչպես նշվեց, պեղվածքում հայտնաբերվել է սյան խոյակի, ինչպես նաև թևավոր խաչի արմավազարդի բեկոր: Հարկ է հայտնել, որ 2011թ. պե-ղումների ընթացքում բազիլիկի հարավային բակում՝ Hg122 քառակուսում, հայտնաբերվել է ութանիստ սյան երկու բեկոր (բեկորների բարձր.՝ 0,37 մ), սյան կենտրոնում դիտելի է 0,12մ տրամագծով անցքը (նկ. 36): Այս գտածո-ները հնարավորություն են տալիս մոտավորապես պատկերացնելու, թե ինչպիսին են եղել եկեղեցու բակերում կանգնեցված վաղքրիստոնեական խաչակիր կոթողները:

Պեղումներով ստացվել են նյութական մշակույթի ուշագրավ օրինակ-ներ: Գտածոների մեջ որոշակի քանակ են կազմում երկաթից պատրաստ-ված մանր իրերի բեկորները, որոնք հիմնականում դարբնոցային ար-տադրանք են: Մեծ մասամբ գտածոները դժվար են ճանաչվում, հավանա-բար դրանց մեջ զգալի քանակ են կազմում աշխատանքային գործիքները: Առանձնանում են մի քանի նետասլաքներ և դանակների բեկորներ: Տարբեր հատվածներում գտնվել է նաև երկաթե խարամ: Ուշագրավ են հատկապես խոփի բեկորները, որոնք բակի հյուսիսային մասում էին:

Ապակե նյութերը հիմնականում բեկոտված են: Լայն տարածում ունեն փչման եղանակով պատրաստված անոթները: XII-XIII դդ. շերտերում դրանք հիմնականում գավաթ-բաժակներ են՝ անգույն կամ կանաչավուն թափանցիկ ապակուց՝ ուղիղ պատերով, ներծկված հատակով և հաստ պակներով: Մի քանի բեկորի վրա նկատելի են սեղմումով արված զարդեր: Անհամեմատ շատ են ապարանջանների բեկորները, որոնք աչքի են ընկ-նում պատրաստման տարբեր եղանակներով և գույների բազմազանու-թյամբ: IV-VII դդ. շերտերում հանդիպում են հաստապատ, մուգ կանաչ սրվակների բեկորներ:

Նյութերի մեջ զգալի են նաև բրոնզե իրերը. ապարանջանի և մատանու բեկորներ, մահիկաձև կախիկ, ելտկուզյան Շեմս ադ-դին ամիրայի (1137-

1176թթ.) դրամը[28]:

Հատուկ հետաքրքրություն է առաջացնում ջնարակած խեցեղենը, որն, ըստ զարդարման տեխնոլոգիայի, կարելի բաժանել մի քանի խմբերի:

Առաջին խմբում են ենթաջնարակային նկարազարդումով անոթները: Դրանք հիմնականում ոչ խորը, օղակաձև նստուկով, լայն փռված ափսեներ են: Անգոբի վրա կանաչ և շագանակագույն ներկով պատկերված են նուրբ երկրաչափական կամ բուսական նախշեր (նկ. 37, 38): Այս խումբը համաժամանակյա զուգահեռներ ունի Դվինի, Ձվարթնոցի, Գառնիի, Օրեն-Կալայի գտածոների մեջ և վերաբերում է IX-X դարերին[29]:

Հաջորդ խմբում այն անոթներն են, որոնք անգոբապատ չեն, հարդարված են լայն, անփույթ արված դարչնագույն և կանաչ ժապավեններով ու կետերով, երբեմն էլ՝ անգոբի կետերով և պատված են անգույն ջնարակով: Տիգրանակերտի բազիլիկի պեղումների ստորին շերտերում՝ 2,0 մ խորությունում և ավելի ցածր, գերիշխում է խեցեղենի հենց այս խումբը (նկ. 39): Առանձնանում են մի քանի տիպեր, որոնց զարդերը միայն անգոբով են և պատված են դեղին, կանաչ կամ անգույն ջնարակով (նկ. 40-41): Վերաբերում է X-XI դարերին:

Ժամանակագրական վերջին խումբը կազմում է թափանցիկ ջնարակի տակ, սպիտակ անգոբի վրա փորագրությամբ և ներկերի համադրությամբ զարդարված խեցեղենը (նկ. 42), որը պատկանում է XII-XIII դարերին:

4. Ժայռափոր հնձանի պեղումները (նկ. 43)

Ամրացված թաղամասի ստորոտում՝ հարավային պարսպից դեպի արևելք, թեքության վրա՝ ժայռի մատույցներում, պեղվել է ժայռափոր մի հնձան, ինչը կատարյալ նորույթ է Արցախի մշակույթի պատմության մեջ (նկ. 44): Այն բաղկացած է խաղողը ճզմելու ժայռափոր, բազմանկյուն հարթակ-առագաստից, որտեղ կարելի էր միանգամից ճզմել մոտ կես տոննա խաղող և քաղցուն հավաքելու դարձյալ ժայռափոր, հորից, որի տարողությունը մոտ 40 լիտր է, և քաղցուն հանելու՝ կարասի համար նախատեսված հատուկ հարթակից:

Պեղումներ են իրականացվել նաև Կենտրոնական թաղամասից հարավարևելք տեղադրված դաշտում, Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու եզրին, ուր պատահաբար բացվել են վաղմիջնադարյան կարասի մնացորդներ (նկ. 45): Կարասի պահպանված կտորը վերնամասում ունի 0,23 մ տրամագիծ, որը 1,05 մ խորությունում դառնում է 0,9 մ, իսկ 1,7 մ՝ սրածայր է: Պարզվեց, որ կարասի շուրջը մշակութային շերտ չկա, հավանական է, որ այն գտնվել է կառույցներից դուրս, այգու մեջ և նախատեսված է եղել հեղուկ կամ սորուն մթերք պահելու համար:

---

28. Դրամը որոշելու համար երախտապարտ ենք դրամագետ, պատմ. գիտ. թեկնածու Արմինե Զոհրաբյանին:

29. Якобсон А. Л. Художественная керамика Байлакана (Оран-Кала), Материалы и исследования по археологии СССР, N67, М.-Л., 1959, с. 239-246; Ղաֆադարյան Կ. Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Եր., 1952, էջ 209-201: Քալանթարյան Ա. Ա., Ձվարթնոցի միջնադարյան խեցեղենը, ՊԲՀ, 1964, N 4, էջ 227-229: Պետրոսյան Հ. Լ., Գառնին 9-14-րդ դարերում, Եր., 1988, էջ 63:

5. Տիգրանակերտի ճարտարապետությունն ըստ 2012թ. պեղումների

Պեղումներն Ամրացված թաղամասում վերսկսվել են նախորդ տարի ընդհատած մասից (հյուսիսային պարսպապատի բոլորակ աշտարակից՝ Ա՛ա՛40, նկ.3).: Հետազոտվել է միջինը 3,8 մ խորությամբ, 300,0 քառ.մ մակերեսով մի հատված, որտեղ ամբողջովին բացվել է բոլորակ՝ 9,0 մ տրամագծով աշտարակը, որն ընդգրկել է ռելիեֆի այս հատվածի լայնացումն ու կտրուկ խորացումը: Այստեղ պահպանվածությունն նույնպես բավական աղքատ է: Ամբողջովին առկա են ժայռափոր հիմքերը, որոնք շրջանի կեսի չափով դուրս են հյուսիսային պարսպապատի արտաքին հարթությունից: Կիսով չափ պահպանվել են աշտարակի քարաշար միջուկը (չորս քարի բարձրությամբ՝ 2,0–2,2մ) և արտաքին՝ ճակատային կողմի մեկ-երկու շարքերի որոշ մասը՝ 1,2 մ բարձրությամբ: Շրջանաձև աշտարակի արտաքին՝ մեկ քառորդ մասից, ժայռի մեջ մնացել են բլոկների փորածո հիմնատակերը միայն: Որոշ բնիկներում առկա են մի քանի «ծիծեռնակապոչ» և առանց այդ կապերի միացված պարսպաքարեր: Ի դեպ, ինչպես ամենուր, հիմնականում պատի առաջին շարքերի յուրաքանչյուր բլոկի համար ժայռի մեջ առանձին հիմնատակ է փորվել: Կառուցապատումը շինարարական նույն եղանակով է, ինչ ունենք արդեն հայտնի աշտարակներում. դեպի կենտրոն փոքրացող կրաքարե բլոկներով շարվածք, բլոկների միջակայքերի ամրացում կրաբեկորային զանգվածով՝ լցված ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղություններով: Այս տեղամասում անընդմեջ բացվել է պարսպի հյուսիսային գիծը, որը 13,5 մ դեպի արևելք շարունակվելով, ուղիղ անկյան տակ 5,0 մ թեքվում է դեպի հարավ, ապա կրկին նույնպիսի թեքումով՝ լանջն ի վար իջնում դեպի արևելք 5,85 մ: Ստացվում է, որ հաշվետու տարում պեղումներով բացվել է պարսպի 24,35 մ հատվածը: Արդյունքում՝ հյուսիսային պարսպի մինչ այս բացվածով ընդհանուր երկարությունը կազմում է 175,15մ: Պարսպի հաստությունը 2,55-2,6-2,67 մ է: Պարսպապատին ներսի կողմից կցված, բացվել է նաև հում աղյուսի պատի 3,4x2,7x2,5 մ չափերի մի զանգված, որտեղ հնարավոր է եղել վավերացնել աղյուսների չափերը՝ 44x32x12, 43x32x12, 41x32x12, 35x32x12, 33x32x12 սմ (նկ. 5): Սրա տակ խճակրային հիմք-հարթակ է նախապատրաստվել, որով լցվել են ժայռի գոգավորությունները: Նման բաղադրությամբ զանգվածով է հարթեցված ժայռը նաև պարսպապատի արտաքին կողմին հարող հատվածներում:

2012թ. պեղումներ են իրականացվել Տիգրանակերտի Ամրացված թաղամասի հարավային պարսպից մոտ 400,0 մ դեպի հարավ-արևելք ընկած հատվածում՝ Անտիկ առաջին թաղամասի տարածքում: Այստեղ դեռևս 2010թ. բացվել էր 5,0x3,0 մ չափերի մի պեղամաս: Այս տարի այն ընդարձակվել է. առանձնացվեց 15,0x15,0 մ չափերի (225,0 քառ. մ) մի նոր տեղամաս, որը խորացվեց մինչև 1,25 մ (նկ. 15): Պեղումներից հետո այստեղ վավերացվեցին անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջաններին վերաբերող շինարարական մնացորդներ (պատեր, հատակներ, թոնիրներ, օջախներ) (նկ. 17), որոնք ժամանակին պատկանել են բնակելի և տնտեսական կառույցների: Mj93, Mj94 Na93, Na94 քառակուսիներում բացված

պատերի մնացորդները հնարավոր դարձրին ամբողջացնել 5,7x5,2 մ հատակագծային չափերով մի սենյակ: Այստեղ բացվեցին նաև երկու՝ 40 սմ տրամագծով, բոլորաձև կտրվածքով ու 20 սմ բարձրությամբ քարեր, որոնք, հավանաբար, սյան խարիսխներ են: Սրանք՝ դրված մի առանցքի վրա, զուգահեռ են սենյակի հյուսիսային պատին և հեռացված դրանից 1,8 մ: Այս պատի հարավային ճակատը 1,2 մ խորությունում շարված է երկու շարք եղևնաձև դրված քարերից, որոնց հաջորդում է ավելի խոշոր քարերից շարված, 20 սմ բարձրությամբ շարքը (նկ. 46): Շարվածքը եռաշերտ և երկճակատանի է: 0,7 մ հաստությամբ պատի երկու ճակատներում շարված միջին մեծության քարերի արանքում լցված է քարահողային կապակցող միջուկը: Կառուցման այս եղանակը բնորոշ է վաղմիջնադարյան շինարվեստին: Այսպիսի շարվածքներ օգտագործվել են Զաքարի-բերդ, Երնջատափ վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիներում[30]: Եղևնաձև շարվածքները սահմանափակ քանակությամբ կիրառվել են նաև անտիկ և անտիկից վաղ միջնադարին անցման ժամանակաշրջաններում: Այդպիսի պատեր կան անտիկ Արտաշատում, Շամիրամում, Շիրակավանում, քիչ ավելի ուշ՝ Հացավանում[31]: Նշված տեղամասում բացվել են անտիկ և միջնադարյան շինությունների մնացորդներ՝ առանձին անպաճույճ պատերի, թոնիրների (Mj93 քառակուսի), օջախների (Mj93, Mj94, Na92 քառակուսիներ), կավից հատակների (Mj93, Mj94, Na93, Na94, Na95 քառակուսիներ) տեսքով:

Կենտրոնական թաղամասի բազիլիկի տեղամասում պեղումներն ընթացել են եկեղեցու հյուսիսային բակի տարածքում: Այստեղ առանձնացվել է 375,0 քառ. մ մակերես զբաղեցնող տեղամաս, որը խորացվել է միջինը մինչև 2,5 մ: Պեղամասում՝ տարբեր քառակուսիներում, բացվել են վաղ և զարգացած միջնադարյան ժամանակաշրջանի պատեր, թոնիրների, օջախների մնացորդներ (նկ. 47): Hb122 քառակուսում 0,9մ խորությունում բացվել է 2,2 մ երկարությամբ և 1,20 մ հաստությամբ պատի մի հատված, որը նախորդ տարում Hb124 քառակուսում, 2,25 մ խորությունում պեղված պատից հեռու է 5,5 մ և զուգահեռ է դրան: Սրանք, հավանաբար, պատկանել են մեկ սենյակի: Վերին շերտում (Hc125, Hb125, Ha125, Gj125 քառակուսիներ)՝ 1,3 մ խորությունում բացվել է 13,5 մ երկարության և 0,7 մ հաստության, որոշ տեղերում նույնիսկ երկրորդական (միակտոր քարեր) օգտագործման քարերից շարված մի պատ: Hb124 և Hc124 քառակուսիներում, 2,9 մ խորությունում վաղ միջնադարին վերաբերող շերտում պեղվել են չորս՝ նույն առանցքով դրված, ճակատային կողմում սրբատաշ քարեր, որոնք կրաշաղախից հատակի վրա են: Hc122 և Hb 23 քառակուսիներում, տարբեր մակարդակների վրա վավերացվել են կավից հատակներ, երևան

30. Կիրակոսյան Լ., Զաքարի-բերդ, բնակելի համալիրների ճարտարապետությունը, ԲԵՀ, 1989, N 2, էջ 96: Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Երնջատափի վաղմիջնադարյան ամրոց-բնակավայրը, ԼՀԳ, 1990, N 9, էջ 97:

31. Տոնիկյան Ա., Բնակելի կառույցների շարվածքների տիպերը Հին Արտաշատում, դասակարգման փորձ, ԼՀԳ, 1986, N 8, էջ 97: Օհանյան Հ., Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի պեղումները, Հայկ ԽՍՀ-ում 1983-1984թթ. դաշտ. հնագիտ. աշխ. արդյունքներին նվիրված գիտ. նստաշրջան, Զեկ. թեզ., Եր., 1985, էջ 40: Тер-Мартиросов Ф. Раскопки античного Ширакавана, АО, М., 1983, с. 423. Тирацян Г. Культура Древней Армении. Ереван, 1988, с. 160:

են բերվել վաղ միջնադարին վերաբերող ճարտարապետական մանրամասներ: Սալահատակը, կոթողային հարթակի մնացորդները, զանգվածեղ (0,85x0,80x0,80մ) պատվանդանը, որը գտնվել է այս տեղամասում և ժամանակին կրել է կոթող, վկայում են հյուսիսային բակի՝ հարուստ վաղ միջնադարյան երբեմնի կառուցապատման մասին:

6. Տիգրանակերտի անտիկ և միջնադարյան բուսական տնտեսությունը և միջավայրն՝ ըստ 2011-2012թթ. հնաբուսաբանական հետազոտության:

Արցախի Տիգրանակերտում 2011-2012 թթ. պեղումների ընթացքում հնավայրի անտիկ և միջնադարյան (բազիլիկ եկեղեցու շրջակայք) մշակութային շերտերից հավաքված նմուշները ենթարկվել են հնաբուսաբանական ուսումնասիրության: Ֆլոտացիայի մեթոդի կիրառմամբ հնագիտական նստվածքներից հնարավոր եղավ անջատել մի քանի հազար միավոր պտղասերմնաբանական նյութ: Տվյալները վկայում են Տիգրանակերտի բուսական տնտեսության կարևորության մասին:

Հիմնականում ուսումնասիրվել են Անտիկ առաջին թաղամասից (Na92, Na95, Mi93, Mj95) վերցված նմուշներ: Ըստ հնաբուսաբանական հետազոտությունների տվյալների՝ անտիկ դարաշրջանում Տիգրանակերտում երկրագործության հիմնական ուղղությունը եղել է հացաբույսերի (Gramineae) մշակությունը: Հայտնաբերված բազմաթիվ ածխացած հացահատիկները վկայում են, որ այստեղ հիմնականում գարի (Hordeum) և ցորեն (Triticum) են մշակել, ընդ որում՝ անտիկ դարաշրջանում գարու մշակությունը մոտ երեք անգամ գերակշռել է ցորենի նկատմամբ: Գարին պատկանել է թեփուկավոր տարատեսկների: Սրա տրիպլետի կողմնային՝ յուրահատուկ մորֆոլոգիայով հատիկների առկայությունը վկայում է, որ դրա առնվազն մի մասը պատկանել է վեցաշարք ենթատեսակին (Hordeum vulgare subsp. vulgare): Եվ կարող ենք փաստել, որ մշակաբույսի առնվազն մի մասը պատկանել է թեփուկավոր բազմաշարք գարուն (Hordeum vulgare subsp. vulgare convar. vulgare): Նախնականորեն ասենք, որ թեփուկավոր երկշարք գարի (Hordeum vulgare subsp. distichon convar. distichon) ևս եղել է, սակայն դրա կոնկրետ քանակության և հարաբերակցության մասին հնարավոր է խոսել միայն մանրակրկիտ վիճակագրական վերլուծություններից հետո: Նշենք, որ գարու մերկահատիկ տարատեսակ Տիգրանակերտի ոչ մի հնագիտական տեղանքում դեռևս չի արձանագրվել: Թեփուկավոր տարատեսակները մեր տարածաշրջանի անցյալում ամենաշատ մշակված բույսերն են:

Մշակության ծավալներով Տիգրանակերտի անցյալում երկրորդ տեղում է եղել ցորենը, մասնավորապես՝ փափուկ տեսակը (Triticum aestivum; սա հացաթխման համար օգտագործվող հիմնական տեսակն է): Փափուկ ցորենի պատմությունը տարածաշրջանում շաղկապված է գարու հետ: Հացազգի այս երկու բույսերը միշտ մշակվել են միաժամանակ՝ սկսած նոր քարեդարից: Որոշ դարաշրջանների համար փաստագրված է փափուկ ցորենի և թեփուկավոր գարու համատեղ մշակությունը խառը ցանքերում:

Տիգրանակերտում օգտագործվել են նաև ցորենի կարծր տեսակներ (Triticum turgidum): Մասնավորապես, արձանագրվել է հաճարի մշակության փաստը: Հաճարը (Triticum dicoccum) տիպական մշակաբույս է դեռևս

երկրագործության հիմնադրման ամենասկզբից և, ինչպես նախորդները, ցանվել է առանց ընդմիջումների: Անցյալում՝ մինչև մեկ տասնամյակ առաջ, հաճարի մշակության ծավալների և տնտեսական նշանակության մասին ակտիվորեն շրջանառվող պատկերացումները չափազանցված էին: Իրականում հաճարը մեծաքանակ չի մշակվել և երբեք էլ առաջնային նշանակություն չի ունեցել և միշտ զիջել է գարուն և փափուկ ցորենին: Այլ հացաբույսերից արձանագրվել է սովորական կորեկը (Panicum miliaceum)՝ շատ փոքր քանակությամբ: Նշենք, որ կորեկը մեր տարածաշրջանում էական քանակությամբ մշակել են Վանի թագավորության շրջանում, բայց հայտնի է եղել դեռևս ուշ բրոնզեդարից:

Անտիկ Տիգրանակերտի մշակաբույսերից են նաև բակլազգիները (Fabaceae), որոնցից միայն ոսպն (Lens culinaris) է արձանագրվել: Հայտնաբերված ածխացած սերմերը վկայում են, որ ոսպը պատկանում է մշակովի մանրասերմ ենթատեսակին (Lens culinaris ssp. microsperma), որը ևս մեր տարածաշրջանի համար բնութագրական է և, որոշակի ընդմիջումներով, բրոնզի ու վաղ երկաթի դարերում է մշակվել և հայտնի եղել նոր քարեդարից սկսած:

Յուղատու բույսեր Տիգրանակերտում դեռևս չեն արձանագրվել:

Անցյալի բուսական տնտեսության վերծանման տեսանկյունից կարևոր են խաղողի (Vitis vinifera) կենսահանքայնացած կամ ածխացած կորիզների գտածոները: Կարող ենք նշել, որ անտիկ Տիգրանակերտում գոյություն է ունեցել առնվազն երկու տեսակի խաղող. ըստ մորֆոլոգիայի (շատ նախնականորեն) դրանցից մեկն ավելի մոտ է տեխնիկական, իսկ մյուսը՝ սեղանի սորտերին: Հետագա գտածոները կօգնեն կոնկրետացնելու այս ենթադրությունները:

Հացազգի մշակաբույսերին համարժեք քանակություններով ծառաթփային բույսերի պտուղների և սերմերի մնացորդներ են հայտնաբերվել Տիգրանակերտում, որոնք վկայում են տեղի այգեգործության (միգուցե նաև՝ հավաքչության) առաջնային նշանակության մասին: Արձանագրված ծառաթփային տեսակների կազմը բավականին ընդարձակ է՝ ընկուզենի (Juglans regia), փռշնի (Celtis sp.), հոնի (Cornus mas), թզենի (Ficus carica), նռնենի (Punica granatum), շլորենի (Prunus sp.): Բոլոր ծառաթփային տեսակների գտածոներն ածխացած էնդոկարպների կամ դրանց բեկորների ձևով են, բացառությամբ փռշնու, որի էնդոկարպը (ժողովրդական՝ կորիզը) կենսահանքայնացած վիճակում է: Բացի ընկուզենուց, մյուս ծառաթփերը տեղական ծագում ունեն և բնութագրական են շրջակայքի համար: Ընկուզենու ծագումը և առկայությունը մեր տարածաշրջանում դեռևս վիճելի է: Տեսակետները բաժանվում են երկու խմբի: Ըստ առաջինի՝ ընկուզենին, որը անվերապահորեն եղել է մեր տարածաշրջանի երկրաբանական դարաշրջաններում, շարունակել է անընդմեջ աճել, հիմա էլ՝ վայրի, ուստի՝ տեղական ծագման է (ընկուզենու անընդմեջ առկայությունը բոլոր երկրաբանական դարաշրջաններում փաստագրված չէ, ուստի այս տեսության ապացույցները չկան): Ըստ երկրորդ տեսության՝ ընկուզենին դադարել է աճել մեր տարածաշրջանում դեռևս մինչև մարդու հայտնվելը, ապա՝ հե-

տագայում, ենթադրաբար պղնձի-քարի դարաշրջաններում (օրինակ՝ Արենի-1 քարայրից հայտնաբերված գտածոները), ներմուծվել է Կենտրոնական կամ Արևելյան Ասիայից, մշակվել, երբեմն լքվելով՝ անցել է վայրաճի և ներառվել բնական էկոհամակարգերում: Թերևս միայն փռշնին է, որ ներկայումս շատ քիչ է օգտագործվում և այնքան էլ հայտնի չէ, սակայն այն մշտապես հավաքվել և օգտագործվել է (բարակ, չոր և փոշենման մեզոկարպը՝ «պտղամիսը») և միայն, թերևս, խորհրդային կարգերի օրոք է մատնվել մոռացության:

Մորֆոլոգիապես տարբերակելի վեգետատիվ մնացորդների (ցողունային փշեր) հիմնամբ հնարավոր եղավ արձանագրել նաև բռինչը (Paliurus spina Christi), որը տեղանքին ամենաբնորոշ թփատեսակներից մեկն է: Այս բույսը ուտելի օրգաններ չունի, հավանաբար օգտագործվել են չոր ճյուղերը՝ որպես վառելիք:

Տիգրանակերտում արձանագրվել են նաև բազմաթիվ մոլախոտեր և վայրի խոտաբույսեր, որոնց կազմում գերակշռում են գաղտրիկազգիների ընտանիքի (Boraginaceae) քանակապես գերակշռող ներկայացուցիչները՝ դաշտային անխուզան (Anchusa arvensis), էխիումը (Echium sp.), դաշտային կաքավկրկուտը (Buglossoides arvensis), հելիոտրոպումը (Heliotropium), խաչածաղկավորների ընտանիքից (Brassicaceae) նեսլիան (Neslia sp.), տորոնազգիներից (Rubiaceae) մակարդախոտը (Galium sp.), բարդածաղկավորներից (Asteraceae) ցենտաուրեան (cf. Centaurea sp.), մորմազգիներից (Solanaceae) սև բանգին (Hyoscyamus niger), մի քանի հացազգի (Poaceae), վայրի և մոլախոտային բույսեր և շատ քիչ մատիտեղազգիներ (Polygonaceae)՝ ի դեմս մատիտեղի (Polygonum sp.), և մանրասերմ բակլազգիներ (Fabaceae), հավանաբար՝ իշառվույտ (cf. Melilotus sp.): Մոլախոտերի և վայրի խոտաբույսերի վերոհիշյալ կազմը որոշակիորեն մատնանշում է չոր տափաստանային բուսականության գոյությունը, որը ներկայումս էլ առկա է անտառներից դուրս տարածքներում:

Միջնաբերդի հում աղյուսներից (Aa43, խորությունը՝ 3,7մ) որևէ էական հնապատղասերմնաբանական նյութ հայտնաբերել չհաջողվեց, գտնվեց միայն վայրի հացազգի բույսի մեկ սերմիկ:

Տիգրանակերտի եկեղեցու շրջակայքի (Hb123, XII-XIII դդ. շերտ, խոր.՝ 1,10մ) հնաբուսաբանական նյութերը կրկնում են անտիկ թաղամասից հայտնաբերվածներին: Միակ տարբերությունը, որ հնարավոր է նախնականորեն արձանագրել, ցորեն-գարի հարաբերակցությունն է միջնադարում՝ հօգուտ ցորենի:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ Տիգրանակերտի շրջակայքի՝ անտիկ դարաշրջանում և միջնադարում գոյություն ունեցած բուսականությունը (հետևաբար՝ նաև մեզոկլիման) նշանակալիորեն չի տարբերվել ներկայինից:

Եզրակացություններ

1. Պեղումները հյուսիսային պարսպապատի տարածքում հնարավորություն տվեցին ևս 20 մետրով «երկարացնել» պարիսպը՝ այն հասցնելով

մոտ 185 մետրի: Բացվեց երկրորդ կլոր աշտարակը և դրանից ձգվող՝ որոշ տեղերում մինչև 2 մետր բարձրությամբ պարսպապատը՝ ռուստիկ մշակմամբ կվադրերով, որոնց մի մասի վրա պահպանվել են կապերի «ծիծեռնակապոչ» փորվածքները: Ուշագրավ էր պարսպին հարող նոր աղյուսաշար պատի հայտնաբերումը: Հավանական է, որ Տիգրանակերտի պարսիպներն ունեցել են հում աղյուսից շարված վերնահատվածներ, որոնք փլվելով ծածկել են քարե հիմքերը, «թաքցրել» պարիսպները, ինչի շնորհիվ էլ դրանք հասել են մեզ:

2. Այս պեղաշրջանն աչքի ընկավ քաղաքի կառուցվածքի վերաբերյալ նոր տվյալների հայթհայթման առատությամբ: Ինչպես ցույց տվեցին Անտիկ առաջին թաղամասի պեղումները, Տիգրանակերտը, Ամրացված թաղամասից զատ, ունեցել է նաև քաղաքային առանձին թաղամասեր, որոնցից մեկն էլ Անտիկ առաջին թաղամասն է: Այստեղ աչքի են ընկնում հիմնականում մշակութային երկու շերտ՝ ուշ հելլենիստական-անտիկ (Ք.ա. I-Ք.հ. III դարեր) և վաղ միջնադարյան (IV-IX դարեր): Կառուցապատումը կանոնավոր է, բնակելի համալիրներն ուղղանկյուն են, ունեն կավածեփ հատակներ և հարթակներ: Նշելի է անտիկ խեցեղենի տիպաբանական բազմազանությունը, գունազարդ և սևափայլ բարձրորակ խեցեղենի հարյուրավոր գյուտերը, որոնք քաղաքային զարգացած մշակույթի էական վկայություններից են: Ուշագրավ է, որ քիչ չեն նաև մերձավորարևելյան և փոքրասիական կենտրոններից ներմուծված նմուշները, հանգամանք, որը վկայում է առևտրամշակութային ակտիվ կապերի մասին: Գտածոներում կարելի է հատուկ առանձնացնել սկյութական տիպի նետասլաքների, բրոնզե հայելու, խաղողի ողկույզների քանդակներով զարդարված, սևափայլ խեցեղենի, տերակոտային արձանիկի բեկորի հայտնաբերումը:

3. Խիստ արդյունավետ էին բազիլիկ եկեղեցու հյուսիսային բակի պեղումները: Նախ՝ ամբողջացվեց նախորդ տարի սկսած, սրբատաշ քարերով կոթողային հարթակի ուսումնասիրությունը: Պարզվեց, որ գործ ունենք հուշասյունային մեծ կառույցի հետ, որը բաղկացած է եղել բազմաստիճան որմնախարսխից, պատվանդանից, որի վրա էլ կանգնեցվել է խաչակիր սյուն: Գտնվել են պատվանդանը, խոյակի մի բեկորը, թևավոր խաչքարի մեկական խաչի բեկոր: Երևան եկավ ընդարձակ սալահատակ (առկա հետքերը կազմում են մոտ 80 քառ. մետր), կոթողային կառույցի հատված, որի պեղումները կշարունակվեն եկող տարի: Այս տվյալները հիմք են հավաստելու, որ եկեղեցու հյուսիսային բակը քաղաքին բնորոշ ընդարձակ հրապարակ է՝ սալահատակած, հարդարված շինություններով և խաչակիր հուշակառույցներով: Պեղածո նյութերի մեջ շատ են հասարակ և ջնարակապատ խեցեղենի նմուշները, ապակյա ապարանջանները, գտվել են նաև նետասլաքներ, դանակների սայրեր, երկաթե խոփ:

Петросян Г., Киракосян Л., Сафарян В., Карапетян И.,
Габриелян А., Варданесова Т., Овсепян Р.

ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА 2012 г.

Резюме

А. Раскопки в районе северной крепостной стены открыли ее еще на 20 метров, доводя общую протяженность до 185 метров. Была раскопана вторая круглая башня целиком и продолжающаяся от нее крепостная стена высотой до двух метров, выложенная обработанными квадрами с сохранившимися на некоторых из них характерными выемками в виде "ласточкиных хвостов". Примечательно открытие другой стены, смежной с крепостной, выложенной кирпичом.

Б. Раскопки Первого античного квартала выявили два культурных слоя: поздне-эллинистический-античный (I в. до н. э.- III в. н. э.) и раннехристианский (IV-V вв.). Застройка равномерная, жилые комплексы прямоугольные с глинобитными полами и площадками. Бросается в глаза типологическое разнообразие античной керамики, в том числе и образцов, привезенных из ближневосточных и малоазийских керамических центров. Найдены также наконечники стрел скифского типа, фрагмент бронзового зеркала, чернолощеная керамика, украшенная штампованным декором виноградных гроздьев, фрагмент терракотовой скульптуры.

В. Раскопки базилики со стороны северного двора представили возможность обобщить исследование площадки памятника, выложенной обработанными камнями. Она включала многоступенчатую опору, пьедестал, на котором была возведена колонна с крестом. Северный двор церкви представлял собой характерную для городского быта просторную площадь, вымощенную плитами, с обтесанными строениями и памятниками с крестами. Среди раскопанного материала много образцов простой и глазурованной керамики, браслетов из стекла, найдены также наконечники стрел, фрагменты ножей, железный плуг.

Petrosyan H., Kirakosyan L., Safaryan V., Karapetyan I.,
Gabrielyan A., Vardanesova T., Hovsepyan R.

MAIN RESULTS OF ARCHEOLOGICAL EXCAVATIONS OF TIGRANAKERT IN ARTSAKH, 2012

Summary

A. Excavations in the area of the northern defensive wall allowed to "extend" the wall for further 20 meters bringing it to approx. 185 meters. The second round tower was entirely opened, as well as the wall extending from it, in some places up to 2 meters in height, made of blocks with rustic surface; on some of them, there were "swallow-tail"-type ties. It was remarkable to find a new brick wall abutting to the enclosure.

B. Excavations in the First antique square approved two cultural layers – of the Late Hellenistic-Antique (1st century BC – 3rd century AD) and of the Early Middle Ages (IV-V Century). The building is regular, dwelling complexes are rectangular and have puddled clay coated floors and platforms. The antique pottery's typological variosity is notable, including those samples imported from the centers of the Middle East and the Asia Minor. The Scythian-type arrows, bronze mirror fragment, blackish–glittering pottery decorated with grapevine stamped patterns, fraction of terracotta-made statuette were found as well.

C. Excavations of the northern yard of the Basilica completed the study of the monumental platform made of polished stones. It consisted of the mulitlevel anchor, pedestal, on which the cross-bearing pillar was errected. The northern yard of the Basilica is a typical for town, large paved square with decorated buildings and cross-bearing monuments. Archeological finds include many samples of simple and glazed pottery, glass bracelets; arrows, knife blades, iron plowshare were found as well.


Ամրոցային թաղամաս
Fortified Area
Укрепленный квартал
Աղբյուրներ
Springs
Родники
Ջրամբարային
Water pool
Бассейн
Հնձան
Winery
Վաղքրիստոնեական բազիլիկա
(4-6-րդ դարեր)
Early Christian Basilica (4-6 th cc.)
Раннехристианская базилика
(4-6-ые вв.)
Կենտրոնական թաղամաս
Central Area
Центральный квартал
Վաղքրիստոնեական դամբարանադաշտ
(5-8-րդ դարեր)
Early Christian Cemetery (5-8 th cc.)
Раннехристианский некрополь
(5-8-ые вв.)
Հելլենիստական թաղամաս
Hellenistic Area
Античный квартал
Ամենուրեք դամբարանադաշտ
Hellenistic Necropolis
Античный некрополь
0 50 100 U

Նկ. 1


14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45
f`
e`
d`
c`
b`
A`
a`
a
b
c
d
e
f
A
g
h
i
j
a
b
B
c
d
e
f
g
h
i
j
a
b
Ամրոց
Վաղ միջնադար
Զարգացած միջնադար
(11-13 դդ.)
Ցոմբերներ

Նկ. 2



Նկ. 3



Նկ. 15

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7



Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

Նկ. 13

Նկ. 14

Նկ. 16

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19

Նկ. 20

Նկ. 21

Նկ. 22

Նկ. 23

Նկ. 24

Նկ. 25

Նկ. 26

Նկ. 27

Նկ. 28

Նկ. 29

Նկ. 31

Նկ. 32

Նկ. 33

Նկ. 34



Նկ. 30

Նկ. 35

Նկ. 36

Նկ. 37

Նկ. 38

Նկ. 39

Նկ. 40

Նկ. 41

Նկ. 42



Նկ. 43

Նկ. 44



Նկ. 45

Նկ. 46


ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹԱՓՎԱԾՔ
10-13
5-9
ԿԱՎԱ
ԿԱՎԵ ՊԱՏԱԿ
ՍԱԼԱՊԱՏԱԿ
ԹՈՒՐ

Նկ. 47

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քինգ Տ., Կասերես Քուելո դե Օրո Ի., Մյուրեյ Ջ., Էնդրյուս Փ., Հիքսոն Էնդրյուս Ս., Դոմինգես Ալոնսո Պ., Ասրյան Լ., Սանզ Մարտին Թ., Մոլոնեյ Ն., Եպիսկոպոսյան Լ.
Ազոխի քարանձավի 2011-2012թթ. հետազոտությունների հիմնական արդյունքները.....3

Գնունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա.
Կերենի 2011-2012 թթ. պեղումների հիմնական արդյունքները.....20

Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Վարդանեսովա Տ., Հովսեփյան Ռ.
Արցախի Տիգրանակերտի 2011 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները 36

Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանեսովա Տ., Հովսեփյան Ռ.
Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները 73

Սարգսյան Գ.
Կարկառ քաղաքատեղիի 2011-2012 թթ. պեղումների հիմնական արդյունքները.....109

Սարգսյան Գ., Այվազյան Ս.
Դադիվանքի գլխավոր մուտքի պեղման-մաքրման աշխատանքները.....133

Սարգսյան Գ., Այվազյան Ս.
Հոռեկավանքի պեղման-մաքրման աշխատանքները.....138

Սարգսյան Գ., Այվազյան Ս.
«Ջուխտակ վանք» սրբատեղիի պեղման-մաքրման աշխատանքները.....147

Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ.
Տողի մելիք Եգանի ապարանքի պեղումների հիմնական արդյունքները.....152

Սարգսյան Գ.
«Սուրբ Սարիբեկ» հնավայրի պեղման-մաքրման աշխատանքները.....178

Սարգսյան Գ.
Ծաղկաշեն գյուղի «Կաշենի» գունավոր մետաղների հանքավայրի տարածքի նորաբաց շինության պեղման-մաքրման աշխատանքներ.....184

«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 2011-2012թթ.

ARCHAEOLOGICAL STUDIES IN ARTSAKH 2011-2012

Սրբագրիչ՝ Ա. Ավագիմյան
Համակարգչային էջադրումը՝ Թ. Հարությունյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափը՝ 70x108 1/16,
ծավալը՝ 12 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ 2015